



ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՈՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. Բոնուս-Մալուս (ԲՄ) համակարգը կիրառվում է ԱՊՊԱ պայմանագրում սահմանված ապահովադրի նկատմամբ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության, համայնքի և օտարերկրյա պետության անունից կնքված պայմանագրերի գծով որպես ապահովադիր սույն կանոնների իմաստով դիտարկվում է նրանց անունից ԱՊՊԱ պայմանագիրը կնքած մարմինը:

2. Առաջին անգամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում ապահովադրին տրվում է ԲՄ բազիսային դասը: Առաջին ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո (անկախ հետագայում ԱՊՊԱ պայմանագրի կնքման հանգամանքից) ապահովադրի ԲՄ դասը սույն հավելվածի աղյուսակ 5-ով նախատեսված $ԲՄ_{փոփ}$ հաշվարկման համար պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում պայմանի առաջացման ամսաթվին վերահաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա (մնացած ժամանակահատվածում ապահովադրի ԲՄ դաս է համարվում վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասը)

$$ԲՄ = ԲՄ_{նախ} \pm ԲՄ_{փոփ}$$

որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝

ԲՄ	Ապահովադրի ԲՄ դասն է	
ԲՄ_{նախ}	Ապահովադրի՝ վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասն է	
ԲՄ_{փոփ}	ԲՄ դասի փոփոխությունն է, որը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝	
	$ԲՄ_{փոփ} =$	(+ U), եթե $J \geq 0,412$ (0), եթե Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր, և այդ օրը $0,103 < J < 0,412$ (-1), եթե Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր, և այդ օրը $J \leq 0,103$,
	որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝	
	U	մալուսային դասերի քանակն է և հավասար է J կարգավորող գործակցին՝ դրա կոտորակային մասը մինչև ամբողջական թիվ կլորացված (0.412-ից փոքր նիշերը կլորացվում են դեպի ներքև, իսկ մեծ կամ հավասար նիշերը՝ դեպի վերև)
	J	կարգավորող գործակցին է և հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա
$J = (4 * (1/C_1 + \dots + 1/C_n))$, որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝		
C_n	Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարի պահին Ապահովադրի անունից կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված SU-ների քանակն է: Ընդ որում՝ ԲՄ դեպք է	

	<p>համարվում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցում վճարելու որոշման կայացումը, որը պայմանավորված է տվյալ ապահովադրի կողմից կնքված պայմանագրում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պատճառած վնասի հատուցման հետ: Միննույն ԱՊՊԱ պատահարի համար տվյալ ապահովադրի գծով հատուցում վճարելու վերաբերյալ մեկից ավելի որոշում կայացվելու դեպքում հիմք է ընդունվում միայն այդ որոշումներից առաջինը:</p>
Պայմանագրային օր	<p>2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ընկած օրերի քանակ, որոնց ընթացքում առկա է եղել Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագիր (պայմանագրեր):</p>

3. Միջին կամ բարձր ռիսկային դասում գտնվող և վերջին 1460 պայմանագրային օրվա ընթացքում անընդմեջ ընդհանուր առմամբ (-4) դաս ստացած Ապահովադիրը վերջին բոնուսային դասի ստացման ամսաթվից ստանում է ԲՄ բազիսային դասը:

4. ԲՄ դասի հաշվարկն իրականացվում է ապահովադիրների վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

5. ԲՄ դասին համապատասխանող գործակիցների մեծություններն են՝

ԲՄ ԽՈՒՄԲԸ	ԲՄ ԴԱՍԸ	ԲՄ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 22	250%
	Դաս 21	250%
	Դաս 20	250%
	Դաս 19	200%
ՄԻՋԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 18	144%
	Դաս 17	140%
	Դաս 16	132%
	Դաս 15	124%
	Դաս 14	116%
	Դաս 13	112%
	Դաս 12	108%
ԲԱՋԻՍԱՅԻՆ	Դաս 11	104%
	Դաս 10	100%
ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 9	97%
	Դաս 8	94%
	Դաս 7	91%
	Դաս 6	88%
	Դաս 5	85%
	Դաս 4	82%
	Դաս 3	75%
	Դաս 2	65%
	Դաս 1	50%

6. Ապահովադրի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ սույն գլխով սահմանված հանգամանքները հիմք են ընդունվում՝ անկախ ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական ընկերության փոփոխման հանգամանքից:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Ապահովադրի՝ սույն կանոններին համապատասխան ԲՄ դասի հաշվարկման ժամանակ նրա՝ մինչև 01/09/2016թ.-ը ձևավորված ապահովագրական պատմությունը հաշվի է առնվում հետևյալ կանոններին համապատասխան.

1) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) չնշված անձանց համար մինչև 01/09/2016թ.-ը ձևավորված ողջ ապահովագրական պատմության նկատմամբ կիրառվում են սույն կանոնների դրույթները,

2) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) նշված անձանց համար որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասը մինչև 01/09/2016թ.-ը վերջին անգամ փոխվելու կամ ԲՄ դաս ստանալու օրը համարվում է իբրև սույն կանոններով նախատեսված՝ ապահովադրի դասի վերջին վերահաշվարկման օր, իսկ որպես լիազորված տիրապետող ստացած ԲՄ դասը՝ իբրև ապահովադրի վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դաս՝ այդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի նկատմամբ կիրառելով սույն կանոնների դրույթները,

3) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված անձանց համար սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված օրերի քանակի մեջ հաշվարկվում են այդ անձանց՝ մինչև 01/09/2016 թ.-ը վերջին անգամ մալուս ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո ընկած պայմանագրային օրերը: